**ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ**
**25 ապրիլ 2022 թվականք. Արթիկ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**<<Գրիգնես>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված, Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի Արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության վերաբերյալ 4-րդ հանրային քննարկման**

Հանրային քննարկումը սկսվեց ժամը 11:00-ին:

**Ներկա էին՝** Արթիկի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մ. Մովսիսյանը, ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վրեժ Վարդանյանը, Արթիկի համայնքապետարանի համապատասխան բաժինների աշխատակիցներ, կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքի բնակիչներ:

**Հանրային քննարկումը վարում էր** Արթիկ համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի կողմից լիազորված անձ՝ Արթիկի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մ. Մովսիսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց հանրային քննարկման թեման:

Հանրային լսումների օրակարգում ընդգրկված ծրագրի նախագիծն ընդհանուր գծերով ներկայացրեց ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վրեժ Վարդանյանը: Նա համառոտ ներկայացրերց փորձաքննական գործընթացի իրավական հենքը, այն է՝ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ_110_Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325_Ն որոշման հավելվածի համաձայն՝ տեղի են ունենում Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի Արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների (4_րդ) փուլը: Հանրային քննարկումից առնվազն 7 աշխատանքային օր առաջ իրականացվել է հանրության իրազեկում, մասնավորապես հայտարարությունը տեղադրվել է Հայաստանի Հանրապետություն պաշտոնական օրաթերթում, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջում, Արթիկի համայնքապետարանի պաշտոնական էջում:

<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի բ ենթակետով

նախատեսվող գործունեությունը ենթակա է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, դասակարգվում է Ա կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում: Նա ներկայացրեց փորձաքննության գրոծընթացը, որն իրականացվում է 2 փուլերով: Առաջին փուլը դա նախնական փուլն է, որի ընթացքում փորձաքննության է ենթարկվում նախնական գնահատման հայտը, ինչի հիման վրա կազմվում է տեխնիկական առաջադրանք: 2-րդ փուլը հիմնական փուլն է, որը ներկա պահին ընթանում է: Այս փուլում փորձաքննության է ենթարկվում գնահատման հաշվետվությունը, որը կազմվել է նախնական փուլի հիման վրա տրամադրված տեխնիկական առաջադրանքի հիման վրա: Գնահատման հաշվետվության փորձաքննության այս փուլում կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ ստանալու նպատակով դիմել ենք Շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումների և համապատասխան ոլորտի պետական լիազոր կազմակերպությունների: Ստացված առաջարկությունները և դիտողությունները հաշվի ենք առել հաշվետվության լրամշակված տարբերակում, և այս պահին հանրային քննարկումներին ենք ներկայացնում գնահատման հաշվետվության վերջնական լրամշակված տարբերակը, որի հիման վրա կազմվել է պետական փորձաքննական եզրակացության որոշման նախագիծը: Օրենքով սահմանված կարգով հանրային ծանուցումից առնվազն 10 աշխատանքային օրվա ընթացքում հանրությունն իր առաջարկությունները, դիտողությունները գրավոր տեսքով կարող է ներկայացնել Շրջակա միջավայրի նախարարություն, որից հետո կտրվի օրենքով սահմանված կարգով փորձաքննական եզրակացություն:

**Ելույթ ունեցան.**

Արթիկ համայնքի ավագանու անդամ Ոսկան Վարդանյանը, ով ներկայացավ նաև որպես Արթիկի համայնքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հանձնաժողովի քարտուղար, նշեց, որ հիմանակնում կատարվելու է ուղիղ կտրվածքով հանքանյութի արդյունահանում, տարեկան արդյունահանվելու է 34 738 մ$^3$: Ժամանակին եղել է շահագործված հանք: ԽՍՀՄ տարիներին տուֆ քարի արդյունահանման պրոցեսի ընթացքում համայնքի բնակիչները փոշուց ավելի շատ են տուժել, քան հիմա: Բնապահպանական խնդիրներ հանքի վերաշահագործումով չեն առաջանա: Նախատեսված բնապահպանական լրացուցիչ միջոցառումներից նախատեսվում է ծառատունկ, ջրցան մեքենայով քարհատում, ինչը փոշու արտանետումները կհասցնի նվազագույնի: Ծրագրի նախագծում մանրամասն ներկայացված են բնապահպանական բալար միջոցառումները: Հանքավայրի վերաշահագործումով կստեղծվեն հավելյալ 20 աշխատատեղ, կբարեկարգվի նաև դեպի հանքավայր տանող ճանապարհահատվածը: Ճանապարհահատվածը մի մասն անցնում է նաև նախկին <<Արագած>> պիաներական ճամբարի ճանապարհով, որն ամառային ամիսներին համայնքի համար ծառայում է հանգստի և ժամանցի վայր:

Քանի որ Արթիկի երկրորդական փողոցների բարեկարգումն իրականացվելու է տուֆ քարով սալապատման միջոցով, ապա <<ԳՐԻԳՆԵՍ>> ընկերության գործունեությունն ուղղվելու է նաև ի շահ համայնքի, ի շահ ազգաբնակչությանը:
Բնականաբար յուրաքանչյուր իրեն հարգող գործարար պետք է իր գործունեության ընթացքում նաև իր համայնքին ցուցաբերի սոցիալական աջակցություն:

**Մասնակիցների կողմից բարձրացվեցին հարցեր.**

ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը հարցրեց, մոտավոր քանի աշխատատեղ է ստեղծվելու հանքի վերաշահագործմամբ:
Համայնքի ավագանի Ռ. Վարդանյանը պատասխանեց, որ մոտավոր աշխատատեղերի քանակը կախված է աշխատանքային ծավալներից, սկզմնական ժամանակահատվածում 20, ապա ըստ արդյունահանման ծավալների՝ մինչև 30, 40 աշխատատեղ:
Նիստը վարող Մ. Մովսիսյանը հարցրեց, արդյոք հիմա այդ հանքավայրը գործող, աշխատող հանքավայր է, և կազմակերպությունը ցանկանում է ընդլայնել:
Ռ. Վարդանյանը պատասխանեց, որ նախկինում ԽՍՀՄ տարիներին հանքավայրը շահագործվել է, և հանքաքարի կարծրությունը հենց բարձրացել է, հանքարդյունահանումը դադարել է այդ մասում, և բացվել են նոր հանքեր, որտեղ քարի խտությունն ավելի ցածր է եղել: Այժմ կազմակերպությունն այդ թողած կարծր հանքանյութն ուզում են արդյունահանել: Սա ենթադրում է, որ հողի հեռացում չպետք է լինի, գյուղատնտեսական նշանակության հողեր չկան, որ մանկաբացվեն: Հանքավայրի վերաշահագործման ընթացքում նման խնդիրներ չեն առաջանա, մանկաբացման աշխատանքներ չպետք է լինեն:
Կազմակերպությունն ավելի շատ ռեկուլտիվացիոն աշխատանքներ պետք է իրականացնի: Թափոնները կույտերով լցված են, դրանք պետք է հարթեցվեն:
Նիստը վարող Մ. Մովսիսյանը հարցրեց, արդյոք հանքանյութի ծավալները հաշվարկված են, տնտեսապես արդյունավետ գործունեություն է հանքի վերաբացումը:
Ռ. Վարդանյանը պատասխանեց, որ առանց ծավալներ հաշվելու լիցենզիա չի տրամադրվի: Ուսումնասիրությունները կատարված են, հաշվարկներ կան, որոնք ներկայացված են նախագծում:
ՇՄԱՓԿ ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Վ. Վարդանյանը հարցրեց, թե նախկին շահագործումից հետո մնացել են թափոններ, և արդյոք կազմակերպության միջոցով այդ թափոնները մաքրվելու են:
Ռ. Վարդանյանը պատասխանեց, այո: Հանքարդյունահանման ընթացքում թափոնները հարթեցվելու են, հողածածկվելու է, որը հետագայում կարող է դառնա արոտավայր: Գործողությունը օպտիմալ պետք է իրականացվի:

Համայնքի բնակիչները միանշանակ պետք է վստահ լինեն, որ այս գործունեությունը ոչ միայն բիզնեսի առումով պիտի ծառայի, այլև պիտի ծառայի համայնքի հոգսերին: Համայնքի համար քարը, որը պիտի տրամադրվի համայնքի բարեկարգման ծրագրերի իրականացման համար, տրամադրվելու է իր ինքնարժեքով:

Արթիկի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մ. Մովսիսյանն ասաց, որ ողջունելի է համայնքում բիզնես միջավայրի ստեղծման քայլերը, <<ԳՐԻԳՆԵՍ>> ՍՊԸ-ին մաղթեց հետագա գործերին հաջողություն, ողջունեց նախնական շրջանում 20 աշխատատեղի բացման քայլը: Նա նշեց, որ համայնքապետարանի կողմից կազմակերպչական առումով աջակցությունը հնարավորության սահմաններում կտրամադրվի:

Նիստը վարող Մ. Մովսիսյանը համայնքի ղեկավար Ա. Ոսկանյանի և համայնքի բնակիչներիանունից հայտնեց համայնքի դրական դիրքորոշումը:

Նիստն ավարտվեց ժամը 11:45-ին:

Նիստը վարեց՝
Արթիկ համայնքի ղեկավարի կողմից լիազորված անձ՝
Արթիկի համայնքապետարանի զարգացման ծրագրերի,
տուրիզմի, արտաքին կապերի բաժնի պետ _____ Մ. Մովսիսյան

Արձանագրեց՝
Արթիկի համայնքապետարանի
քարտուղարության, անձնակազմի
կառավարման, եղեկատվական տեխնոլոգիաների
բաժնի առաջատար մասնագետ՝ _____ Տ. Չարչյան

<<ԳՐԻԳՆԵՍ>> ՍՊԸ-ի տնօրեն՝ _____ Ն. Վարդանյան

Կից ներկայացվում է հանրային քննարկման տեսաձայնագրությունը:

Հանրային քննարկումներին մասնակիցների ցանկը կցվում է արձանագրությանը:

<<Գրիգնես>> ՍՊԸ_ի կողմից ներկայացված, Շիրակի մարզի Արթիկի տուֆի հանքավայրի Արևելյան տեղամասի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվության վերաբերյալ 4-րդ հանրային քննարկումների մասնակիցների

**ՑՈՒՑԱԿ**

**25.05.2022 թ. ժամը 11:00-ին** **Արթիկի համայնքապետարան**

| Հ/Հ | Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը | Հեռախոսահամարը | Զբաղվածությունը | Ստորագրությունը |
|---|---|---|---|---|
| 1 | [illegible] | 077-22-01-77 | ՇՄԱՓԳ ՊՄԿԳ [illegible] | [illegible] |
| 2 | [illegible] | 093 100 182 | [illegible] | [illegible] |
| 3 | [illegible] | 077-100-625 | [illegible] | [illegible] |
| 4 | [illegible] | 093-13-99-22 | [illegible] | [illegible] |
| 5 | [illegible] | 098-81-22-09 | Ք.Տ.[illegible] Արթիկի Հ.[illegible] | [illegible] |
| 6 | [illegible] | 094-71-40-72 | [illegible] | [illegible] |
| 7 | [illegible] | 077 27 60 | [illegible] | [illegible] |
| 8 | [illegible] | 077.08 55-68 | [illegible] | [illegible] |
| 9 | [illegible] | 077-85-78-99 | [illegible] | [illegible] |
| 10 | [illegible] | 093 89 01 12 | [illegible] | [illegible] |
| 11 | [illegible] | 093 49 43 43 | [illegible] | [illegible] |
| 12 | [illegible] | 095000700 | Արթիկի [illegible] | [illegible] |
| 13 | [illegible] | 098718803 | Արթիկի [illegible] | [illegible] |
| 14 | | | | |
| 15 | [illegible] | 094871551 | [illegible] | [illegible] |
| 16 | [illegible] | 094888569 | [illegible] | [illegible] |
| 17 | [illegible] | 098 44 54.00 | [illegible] | |
| 18 | [illegible] «Գրիգնես» | 093 01 03 12 «» | [illegible] | [illegible] |
| 19 | [illegible] Գրիգնես | 093 01 12 03 | [illegible] | [illegible] |
| 20 | [illegible] | 094 61 22 29 | [illegible] | [illegible] |
| 21 | [illegible] | 094 136527 | [illegible] | [illegible] |
| 22 | [illegible] | 094 232343 | [illegible] | [illegible] |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 23 | [illegible] | 071 912123 | [illegible] | [illegible] |
| 24 | [illegible] | 077852024 | [illegible] | [illegible] |
| 25 | | | | |
| 26 | | | | |
| 27 | | | | |
| 28 | | | | |
| 29 | | | | |
| 30 | | | | |
| 31 | | | | |
| 32 | | | | |
| 33 | | | | |
| 34 | | | | |
| 35 | | | | |
| 36 | | | | |
| 37 | | | | |
| 38 | | | | |
| 39 | | | | |
| 40 | | | | |
| 41 | | | | |
| 42 | | | | |